

29.

Մեր հրատարակած վաւերագրերու շարքին մէջ ընթերցողը ստուգիւ եզական նորութեան մը հանդիպած էին: Մոռացութեան մատնուած պատուարեր զէմը մ'էր ան, որ իբրեւ ծաղիկ մը ծլած հայրենի յարկին մէջ՝ փոխադրուած էր օտար երկնքի տակ, օտար ընկերութեան մը ծոցը, ուր իր սրբութեան գեղով զմայլեցուցած էր ոչ միայն զինքը շրջապատող ընկերութիւնը՝ այլ նոյն իսկ զինքն հիւրընկալող միջավայրը:

Կ'ականարկենք այն հայ «էզիզ» կուսանը՝ որուն գոյութեան նորագիւտ պատմութիւնը տուին մեզ մեր ԿԵ և ԿԶ վաւերագրերը: Անոնց մէջ կը պակսէր սակայն էական ծանօթութիւն մը՝ ինչ ինչ կարևոր պարագաներու շուրջ:

Ուրախ ենք այժմ, որ հետեւեալ թուղթը այդ մասին նոր լոյս մը պիտի սփռէ և այդպէս լիով գոհացում պիտի պատճառէ:

**Գերապայծառի Տեառն Տեառն Մխիթարի Աբբայ Տօրդ մերոյ
Գերագանցի Վարդապետիդ Աստուածաբանութեան**

... Կոյս ոմն զպատացի ի ձեռն Ֆրանցուզ Էլէիին ի վարուց ժամանակաց յղեցեալ էր ի Ֆրանցուզ Կուսանաց Վանքն. սոյն կոյս ստացեալ է զգերագանց վարս առաքի-նութեան, այնքան մինչ զի զարմացեալք սքանչելի վարուց նորա կուսանքն այնմ վանքի գրեալք են զպատմութիւն վարուց նորա առ հրեշտակն Ֆրանցուզի. և նա կոչեալ զսե-բաստացի մինաս վարդապետն տուեալ է զպատմութիւն վարուց այնմիկ կուսին, և ասացեալ է նմա յղել առ գերլարգութիւն ձեր. և մինաս վ.ն եւս գրեալ զողջունագիր մի առ ձեզ և ընդ այնմ գրոյ յղեալ է և զպատմութիւնն այնմիկ կուսին ի միւս անցելում զատկի, և մինչև ցայժմ ոչ է ընկալեալ զպատմութեանի գրոյն. արդ վասն այսորիկ աղաչեաց զիս մինաս վ.ն վերոյգրեալ, և ասաց թէ գրեալ զողջոյն յարգութեան ի դիմաց իմոց առ գերլարգութիւն Աբբայ Տօրն, և հարց թէ արդեօք այսպիսի գիր եհաս առ ձեզ թէ ոչ. եթէ ոչ, գրեսցէ ինձ՝ զի կրկին գրեցից զպատմութիւն կուսին և զողջագիր առ Տէրութիւն իւր. և զպատմութեանի գրոյն շուտով յղեսցէ ինձ, որպէս զի մի յամօթ եղէց մերձ հրեշտակին վերոյգրեցելոյ երբ կրկին հարցանէ զիս: ... Աստ եղեալ միսիօնարքն ոչ ունին զհամաձայնութիւն ընդ մեզ ի տօնելն զտօնս հանդիսաւորս, և ասեն թէ սուրբ ժողովն միայն զհինկ տօնս պատուիրեալ է առնել հին տօմարով և ոչ զայլսն: ... յայտմ ամի յոյժ սաստիկ ժանտամահ, մինչև ցհինկ ամիս տեւաց: ...:

Յամի Տեառն 1738

Նոյեմբերի 24

[Կ. Պոլիս]

Նուաստ ծառայ Տ. Զ.

Հայր թօմաս վարդապետ Թէոդոսեան

27.

Կարողոս Զ.ի թագաւորութեան գրեթէ մայրամուտի (1711 թ. 1740) պահերուն կը կատարուին Հ. Թ. Յովհաննիսեանի յիշատակած պատմական դէպքերը:

Նամակագիրս կը հետաքրքրէ նաև Կերլայի Հայութեան կրած ձախորդութեանց շուրջ՝ տուած որոշ բացատրութեամբ ու ծանօթութիւններով: